Վարդան Հակոբյան

Աշխարհում եթե հանկարծ ծաղիկներ չլինեին…

ԱՆԵՐԿԻՆՔ ՕՐ

Կարճ ճիտքով ոտնամանը, որ ընկած էր թփուտում,
ինձ լացացրեց մի տխուր պատմությամբ։
Ուրեմն՝ ես դեռ մարտադաշտում եմ և իմաստ չունի փնտրել
ընկերոջս։
Ուրեմն՝ ոտքերն այլևս կոշիկների մեջ չեն,
և ինքը փաստորեն չկա։ Ես անխոս արտասվում եմ,
իրականում՝ ինձ համար, որովհետև ինքը չկա այլևս։
Ուրեմն՝ պատերազմը շարունակում է աշխարհին նայել
ավերակված տան շիլ պատուհանով, որ ինքն էլ չի
իմանում վաղուց, թե ուր, ո՞ւմ կամ ո՞ր կողմն է նայում,
մանավանդ, երբ արդեն մեկ է՝ կտեսնի, թե չի տեսնի։
Ուրեմն՝ որքան էլ հոգնած, ես քարշում եմ ոտքերս դեպի
առաջ, ես կրակում եմ, ես արդեն դաժանորեն աջ ու
ձախ փրթում եմ ենիչերներին։ Բոլոր հրաձիգներից
թշնամու դեմ կրակողը ես եմ, ես մխրճվում եմ թուրքի
ռիմակի մեջ, ես վերջին նռնակիս ձգանը քաշում եմ։ Եվ
հանկարծ հոգևարքի մեջ, նրանց դիակների շուռթարս
շուրջպարում, մի հայացք՝ մոտիկ ծառից, ընկնում է ինձ
վրա՝ Հունո՛ո…
Ուրեմն՝ գերեվարել էին իմ ընկերոջը և
ծառից կապկպել… Կոշի՛կդ… Սմարթֆոնը զանգում է
գրպանիս մեջ։ Կարենայի խոսել… Հաստատ՝ մայրս է։
Ապրիլը երկինք չունի։ Բուռս թաց կավի մեջ է, ասես իմ
մանկության տաք կավն է, ո՛նց կուզենայի մի նոր երկիր

հունցել։
Որոտ, կայծակ չեն կարողանում ոչ անձրևներով,
ոչ ծաղիկներով, ոչ արևով անգամ գարուն հաստատել։

ԿՐԱԿԻ ՎՐԱ

Ես ընթերցում եմ երեկոն՝
բաց չթողնելով և ոչ մի աստղ,
անգամ եթե նա դեռ չի ծագել։
Մթան մեջ Տաճարի խաչը
համբուրում են գիշերային հրեշտակները,
կարմիր ու տաք լույսը կամաց-կամաց
ցոլարձակվում է քարերից,
մի աղջիկ այն հավաքում է
չթե փեշերի մեջ։

Աղջկան երբեք մենակ չթողնող շնիկը
մի երկու բերան զգուշացման
հաչոցներ է նվիրում
ինչ-որ տղայի, որը, ի զարմանս շնիկի,
չի ուզում տեսնել գեղեցկությունը
տիրուհու
և անցնում է անտարբեր։
Ամեն մոմ բոցկլտում է
վառողի
հոգեթրթիռներով։

Երիտասարդ զանգահարը մատների մեջ
հավաքել է
հայոց բոլոր եկեղեցիների
զանգալեզվակները՝
տարոնյան որդանակարմիր թելերով։

Զվարթնոցը մոտենում է ինքն իրեն,
և սփյուռված քարերն ու խաչքարերը
վերադառնում են։
Գանձասարից լսվում են Լույս զվարթը՝
տխրաշաղի ստվերներում,
Արեգակն արդարը՝ դարի
անարդարության
թանձր քողերի ներքո։

Շենքերից մեկի հինգերորդ հարկից,
ծանոթ կանչի վրա, գլուխը հանում է
Արուսյակը, և
բոլորս տեսնում ենք, թե լուսինը
ոնց է պատարագում թեժ երկնքում։
Երկիրը տաճարվում է այնտեղ,
ուր հողը փխրուն է դառնում վաղվա
մոտեցող քայլերից,
իմ համանկարում պատկերվում են
քարերը,
աստղերը,
որոնց կտուցներից
մեռոնն ուր էլ կաթի, այնտեղ
հայոց քաջերի արյունն է փարոսվում։
Մեր տաճարները
միշտ բարձրանում են
առաջին գծի վրա։ Եվ նրանց
մեր նահատակներն են ուղղորդում։

Ես հագնում եմ հրե ղողանջները զանգի
ու ճանապարհ ընկնում դեպի
Քիրս՝

նրա գլխին դնելու Ոսկե թագը
Տիգրան Մեծի,
որ դպիր, պոետ ու հնագետ
Հրաչյա Բեգլարյանը գտել է
պեղումների ժամանակ՝ մ.թ. հետո,
չգիտեմ որերորդ դարում։

Ասում են՝ Սուրբ Տաճարի բացումից
հաշված ժամեր անց
շատ, շատ հեռվից եկած
մի հասարակ հայորդի՝
սպիտակ շորերով
(տեսնողների կարծիքով,
իբր, եղել է Նարեկացին,
կամ գուցե՝ Շիրազը, մազերը խռիվ էին,
մեկն էլ ասում է՝ չէ, քարինգցի
մի գիշերաջրվոր էր՝ Բաշխունց Խաչին),
յոթ օր՝ գիշեր ու ցերեկ չի հեռացել
Տաճարից,
ձեռքերով ու ճաքճքած շուրթերով
համբուրել է քարերը,
որոնց վրա նրա թողած հետքերը
երևում են միայն ու միայն գիշերները՝
ծիկրակելով չմարող աստղերի տեսքով…

Իսկ հրեշտակները շրջում են խրամատներում։

ՎԵՐՋՆԱԳԻՐ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ

(Շարքային զինվոր և դպիր Վարդան Հակոբյանից)

Խաղաղությունը բաղկացած է
պատերազմներից։ Իսկ

ես չգիտեմ՝ ինչից եմ միաձուլված։
Խոտերի ու ամպերի միջով ընթանում է
հրեշտակների թևերից հյուսված երկինքը։
Ոտքերս վաղուց արդեն հրթիռներ են,
ոսկորներս՝
չինական թրեր,
ձեռքերս ինքնաթիռի թևեր են,
աչքերս՝ միջուկային ռումբեր,
սիրտս՝ սեղմնակոճակների ոսկյա տուփ։

Երկնքում ճառագած
բյուրանուն աստղերի մեջ
Աստծո կենարար լույսով են շողշողում
հայոց հազար ու մի եկեղեցիները։
Ձեզ ով ասաց ինձ սպանեք այնքան,
այնքան ավերեք
չքնաղ տունն իմ հայրենական,
որ ես ստիպված վերածվեմ ռմբարկուի։

Հիմա ժամն է արդեն՝ ճշտապահորեն
էվակուացնելու
բոլոր հավքերին, երեխաներին։
Գիտեմ, իհարկե, իմ հարվածներից կոչնչանան
նաև իմ պապերի կերտած հոյակերտ
տաճարները,
որոնցից մեկն էլ հիմա ձեզ համար
նախագահական նստավայր եք դարձրել,
կոչնչանան իմ պապերի
սրբազան շիրիմները,
քանի որ դուք իմ նախնիների երկրում եք ապրում,
բայց ինչ արած, ուրիշ ելք ես չունեմ,

նա ով սիրում է
խաղաղություն,
չի կարող պատերազմները շրջանցել։

Ես գնում եմ դեպի խաղաղություն, ուր
իմ հողն ապրելու տեղ է, ոչ թե մեռնելու։
Ինձ ամենուրեք ուղեկցում են հրեշտակները։

12.06.2016 թ.

ՀՈՐԻԶՈՆԻ ՎՐԱ

ծառը թառել է հավքի թևերին
ծառը բուսել է հավքի թևերին
սլանում է
օրը անցնում է պտույտների մեջ
անհավանական թանձր կապույտի
և ծառը մի օրվա մեջ երեք անգամ
ծաղկավորվում է
մեկ Սաքունց սարում
մեկ Ղուզե տափում
մեկ Մեծ քարի վրա
հետո հավքը մթնըժորած ժըմըժանքին
կամաց-կամաց հեռանալով դառնում է
մի կետ հորիզոնում վանք է դառնում
դառնում է մեր Ամըտեղա վանքը
գիշերն սկսում է վանքը ծաղկել մութի մեջ
ու լուսեղեն թռչնի թևի վրա վերադառնալ
այս ամենը երևում է միայն մեր տան կտուրից
քանի դեռ այն չի քանդվել և տարիքս հինգ է

Աշխարհում եթե հանկարծ ծաղիկներ չլինեին…

Աշխարհում եթե հանկարծ ծաղիկներ չլինեին,
գուցե և ամեն առավոտ արեգակը չծագեր…
Կատարվանքի ճամփան ոչ մի տեղ չէր հասնի,
և դու մութը մութին չէիր վռազի մոմ վառելու,
խոտերը կթոշնեին հանդերում՝ հողից դեռ չելած,
գետերը ալիք-ալիք կլերդանային լերկ ափերի մեջ,
օրերը կծանրանային կապարե ցավի նժարներում,
ձկները ջրում շնչասպառ կլինեին օդի պակասից,
թռչունները միաձայն երգադուլ կանեին ամենուր,
իսկ սերը կլիներ սովորական, առօրյա մի սուտ։
Եվ, այդուհանդերձ, ծաղիկը մի բան լավ է գիտակցում՝
ծաղիկ լինելու համար պետք է մի քիչ էլ ծաղիկ չլինել։

ԾՆՆԴԱՎԱՅՐ

Մտնում եմ մեր հանդերի լռության մեջ,
որն ավելի է թանձրանում, երբ
մտորում եմ վաղվա մասին, անգամ
շյուղերի արանքով
իմ ու ծառի
ոտքերի տակ փշրված լուսնի
շողը ոչինչ չի կարող փոխել,
որովհետև, ի վերջո, լռությունը
ավելի կարծր է մթությունից, թեև
երկուսն էլ գրեթե նույն նյութից են։

Իմ հուշերի մեջ գետում լողում են
անձայն աստղերը՝
մանկությունս առած իրենց մեջ։

Հ.Գ.
Մեր հանդերում մեզանից ոչ ոք չկա

և այնպես է թվում ինձ, թե այստեղ

ես ընդամենը

մի ուղեմոլոր օտարական եմ…